

# ԲԱՆԱՎԵՃ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄ

## ՄԻ ԱՌԵՂՍՎԱՍ ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԱՆՈՒՄ

### Պ. Մ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևի հայ հին պատմագրության մեջ չկա մեկ ուրիշ գրվածք, որն այնքան մեծ հետաքրքրություն առաջ բերեր բանասերների շրջանում, որքան Ագաթանգեղոսի «Հայոց պատմությունը»: Այդ իմաստով, թերևս, նրա հետ կարող է համեմատվել միայն Խորենացու պատմությունը: Ագաթանգեղոսը վաղ միջնադարից սկսած թարգմանության ճանապարհով մտել է տարածման լայն ու լորտ՝ թե՛ ծավալի և թե՛ բովանդակության առումով ենթարկվելով փոփոխությունների ու վերախմբագրումների: Հայագիտությունն այժմ աներկբա հանգել է այն հետևության, որ հայոց դարձի պատմության և Գրիգոր Լուսավորչի վարքի՝ միջնադարում ինը լեզվով հայտնի բնագրերի հիմքը և նախօրինակը գրվել է հայերեն լեզվով և ապա իր շրջանառությունը կատարել արևելյան ու արևմտյան քրիստոնյա ժողովուրդների մշակութային աշխարհում: Ագաթանգեղագիտությունը գրեթե 300 տարվա իր երկար ճանապարհին շատ հարցեր է լուծել, բայց մեր մատենագրության այդ երախայրիքի հետ կապված բազում հանելուկներ դեռևս կարոտ են պարզաբանումների:

Հայերեն Ագաթանգեղոսն ունի բավական ընդարձակ մի առաջաբան, որը նրա հունարեն խմբագրության և վերջինից կատարված արաբերեն ընդարձակ թարգմանության մեջ համարյա իսպառ բացակայում է: Հայերեն առաջաբանը, պատմա-գեղարվեստական երկի հղացման ու գրողի ստեղծագործական երկունքի մասին իր լայնարձակ խորհրդածություններով, պատմության այլալեզու տարբերակների համեմատությամբ, մնում է բացառիկ ինքնատիպ վիճակում: Առաջաբանի՝ 12 ոչ լրիվ էջ կազմող ծավալի՝ գերակշիռ մասը 6/2 հարաբերությամբ ստեղծագործող անհատի դժվարին աշխատանքի մասին է, աշխատանք, որը համեմատվում է առևտրական նպատակներով իրենց՝ ծովի կուտակադեզ ալիքներին, ջրերի հորձանքներին ու փոթորիկներին հանձնած նավարկողների խիզախության հետ: Ընշասեր և օգտածարավ մարդիկ, նկատում է պատմիչը, «գրաւական եղեալ զանձինս շահաւորն օգտութեան և կէտ՝ զմահ մրցանաց յաղթութեան, ընդ մեծանալ վաճառացն փոխանակեն զինքեանս» (§ 1. «շահութաբեր օգտի համար վտանգի ենթարկվելով և մահվան դեմ մաքառելով՝ իրենց անձը գրավ են դնում ի սեր բարեհաջող վաճառականության»): Բարեհաջող առևտուրը նրանց հնարավորություն է տալիս թոթափել աղքատի անունը, «զտառապեալ ընտանեակսն թափեալ ի գրաւահարկ

<sup>1</sup> Նշում ենք ըստ նրա գիտական հրատարակության. տե՛ս «Ագաթանգեղայ Պատմություն Հայոց, աշխատութեամբ Գ. Տեր-Մկրտչեան և Ստ. Կանայեանց», Տփղիս, 1909, էջ 1—12: Մեջբերումները կատարվում են այս տպագրից՝ փակագծերում պարբերությունների համարակալումների նշումով և Ա. Տեր-Ղևոնդյանի աշխարհարար թարգմանությամբ:

իշխանացն բռնութենէ» (§ 2. «տառապլալ մերձավորներին ազատել գրավով հարկ պահանջող իշխանների բռնությունից»), վճարել պարտքերը՝ ազատվելով «ի լծոյ ծառայութեան թագաւորացն» (§ 2. «թագավորների հարկատվության լծից»): Այդ նավարկող-վաճառականները հանդիսանում են «զարդ քաղաքաց, նոքա և մեծութիւն գաւառաց, նոքա և համարակարք երկայն ճանապարհաց, նոքա և ուղեգնացք աշխարհի, նոքա և ճաշակիչք օտարութեան» (§ 4. «քաղաքների զարդ են, գավառների հպարտություն, երկար ճանապարհների շափարարներ են, աշխարհի ճամփորդներ և օտարության ճաշակողներ»):

Այդպես երկար ու անշտապ Ագաթանգեղոսը շարունակում է ծավալել գեղարվեստական պատկերը ծովային բազմավտանգ ճանապարհների ու առևտրականի անհանգիստ գործունեության մասին՝ գրողի իր աշխատանքը բնութագրելով որպես «վաճառականութիւն բանից» (§ 7. «խոսքի վաճառականություն»): «...սկեալ ի վաճառականութիւն բանից,— գրում է պատմիչը,— առեալ զահ երկիրդի և տուեալ զգեղեցկադիր յարմարումն պատմութեան... ըստ հրամանացն ի վաճառ մատուցողք» (§ 7. «...սկսենք խոսքի վաճառականությունը, երկյուղածությունը տանք պատմության գեղեցիկ շարադրանքը... ըստ... մեր ստացած հրամանների վաճառքի հանենք»): Հոգևոր արժեքների նվաճման վեհությունն է, ահա, որ Ագաթանգեղոսին իրեն ստիպում է նավարկել «ի վերայ իմաստութեան ծովուն», «ի մատենայած ծովուս պատմութեան» (§ 6. «իմաստության ծովի վրա», «պատմության մատյանների ծովի վրա»):

Մ. Արեղյանը, կարծես մի փոքր խախտելով ներողամտության սահմանները, Ագաթանգեղոսի առաջաբանը համարում է «մթին, ավելորդաբան կերկնություններով ու ճռոտ լեզվով հորինված»<sup>2</sup>: Սակայն հեղինակի երկարաբանությունն ու թվացյալ շատախոսությունը արդարացման իրենց հիմքն ունեն։ Բանն այն է, որ Ագաթանգեղոսի պատմությամբ և մի քանի ուրիշ հուշարձաններով հայ միտքը և գեղարվեստական երևակայությունը դեռ նոր էին բռնում գրավոր խոսքի ճանապարհը։ Հայոց մատենագրությունը սկզբնավորող առաջին հեղինակների համար անփորձությունը, մտավոր աշխատանքի դժվարությունների գիտակցումը, երկունքի տազնապը հաճախ պատճառ էին դառնում, որ նրանք հակվին «շատախոսության», իրենց տանջող հոգսը արտահայտեն խոսքի ավելորդ շոյություններ ու պերճարանությամբ. չէ՞ որ նրանք հաղթահարում էին մի բան, որի համար անցյալից բուն հայկական գրավոր ավանդույթներ չունեին։ Հիշենք, թե Մաշտոցի անձն ու գործը վարքագրության առարկա դարձնելու իր իրավունքների վերաբերմամբ սեփական տարակուսանքները հաղթահարելու համար՝ այժմ ավելորդարանություն թվացող որքա՛ն շատ հիմնավորումների է դիմել Կորյունը «Վարք Մաշտոցի»-ի սկզբում՝ Ս. Գրքից վկայակոչելով բազմաթիվ քաղվածքներ և այդ միջոցով արդարացնելով նյութի ընտրության և առհասարակ ստեղծագործական աշխատանքի իր իրավունքը<sup>3</sup>: Ինչքան ոգևորությունը և ինքնախրախուսանքը, նույնքան էլ հուսահատությունն ու լուրջ գործի համար սեփական կարողությունների պակասի գիտակցումն էին արտահայտում հայ առաջին հեղինակները՝ իրենց պահելով համեստության սահմաններում։

Ագաթանգեղոսի առաջաբանը մեր ուշագրությունը գրավում է մի խնդրի տեսանկյունից. ինչո՞ւ է նա այդքան երկարորեն, անգամ ինքնակրկնությամբ նորից ու նորից հիմնավորելով, պատմիչ-գրողի աշխատանքը համեմատում վաճառականության հետ։ Չմոռանանք, որ նրա պատմության հունարեն թարգ-

<sup>2</sup> Մ. Արեղյան, Երկեր, հտ. 3, Եր., 1968, էջ 179:

<sup>3</sup> Կորյուն, Վարք Մաշտոցի, Ի ձեռն Մ. Արեղյանի, Եր., 1941, էջ 24—36:

մանուկյան ձեռագրերից միայն Ֆլորենցիայի Լավրենտյան գրադարանի գր-  
չագիրն<sup>4</sup> ունի առաջաբան, որը, սակայն, շատ տարբեր է հայերեն առաջաբա-  
նից: Առևտրի ու խոսքի վաճառականության մասին՝ վերջինիս մեջ էջեր զբա-  
ղեցնող երկարապատում հատվածը հունարենը տալիս է մի փոքր պարբերու-  
թյամբ, որը հայերենի խիստ համառոտ ամփոփումն է, և ապա ներկայացնում  
է Պարսկաստանում Պարթևական հարստության վերջին արքա Արտավանի դեմ  
Սասանյան դինաստիայի հիմնադիր Արտաշիրի գահակալական կոիվների  
պատմությունը, որը հայերեն Ագաթանգեղոսում բացակայում է և, ինչպես  
Նյուդեքենն է նկատել, ծագում է պարսից գրականության «Արտաշիր Բարական  
կարնամակ» անունով հայտնի հուշարձանից<sup>5</sup>:

Հարց է առաջ գալիս. ինչու է Ագաթանգեղոսը դիմել առևտուր-դպրու-  
թյուն զուգահեռին, մտքի աշխատանքը համեմատել վաճառականական ճա-  
նապարհորդության հետ՝ առաջաբանի վերջում իր գեղարվեստական միտումին  
տալով շատ որոշակի տեսք. «Փութացեալ բացցուք զթանգսրական վաճառս  
խանթից, վաճառեսցուք լսելիաց զգիւտս աշխատութեան մերոյ՝ առնուլ  
զունկնդրութիւն և տալ զպատմութիւն» (§ 17. «Փութանք բացել մեր վաճառա-  
կանական խանութների առևտուրը, վաճառենք ունկնդրներին մեր աշխատան-  
քի արդյունքները՝ ստանալով նրանց ունկնդրությունը և տալով մեր այս պատ-  
մությունը»): Ապա և քաջարանց Տրդատին դիմելով՝ գրել է. «...բերեալ զՀահ  
վաճառին աշխարհի շինութիւն՝ քեզ ի գանձ յաւելցուք ի մերոյ ծովավաստակ  
նաւաստեացս» (§ 17. «...բերելով մեր առևտրի շահը ի նպաստ երկրի շենաց-  
մանը՝ ավելացնենք քո գանձը մեր՝ նավաստիներին ծովի վաստակով»):

Ագաթանգեղոսը այն դարաշրջանի հեղինակն է, երբ քրիստոնեական աշ-  
խարհայեցողությունը մեզանում հետզհետե մտնում էր իր իրավունքների մեջ,  
և հայ մատենագրությունն ապրում էր ձևավորման ու լինելության գործըն-  
թաց: Հեթանոսությունը պարտված ու կործանված էր, բայց դեռ չէր մահա-  
ցած: Նրա շոշափուկները զգալի էին նոր կազմավորվող աշխարհայացքի ու մը-  
շակույթի համակարգում, աննկատելիորեն մերվում-վերաիմաստավորվում ու  
կենսունակություն էին հանդես բերում քրիստոնեության ազգային ընդհանուր  
մթնոլորտում: Այն հանգամանքը, որ ինչպես որևէ ժողովրդի, այնպես էլ հա-  
յոց գրականության սկզբնավորման շրջանում գեղարվեստական մտքի ար-  
դյունքները՝ պատկերը, համեմատությունը, ընդհանրապես փոխաբերությունը,  
ավելի անմիջականորեն էին կապված իրականության հետ, բխում էին երկրի  
ու ժողովրդի պատմական վիճակից՝ արտացոլելով դարաշրջանի ու միջավայրի  
ազգագրությունը, գործելակերպը, հավատը, ըմբռնումները, սովորույթները և  
այլն, այսինքն՝ գեղարվեստական մտածողությունը իր ծագման հիմքով պատ-  
մական-առարկայական էր, դեռ չէր հասել գրողի տաղանդին ու երևակայու-  
թյանը ներհատուկ պատկերաստեղծման իմանենտ այն ազատությանը, որով  
բնութագրվում են արվեստն ու գրականությունը ավելի նոր ժամանակնե-  
րում, — ահա այս մոտեցմամբ, մեզ թվում է, Ագաթանգեղոսի առաջաբանի՝

<sup>4</sup> Ֆլորենցիայի Լավրենտյան մատենադարանի թիվ VII, 25 գրչագրից Ագաթանգեղոսի  
պատմության հունարեն թարգմանությունը առաջին անգամ հրատարակել է Յոհաննես  
Ստիլտինգը՝ Աերածական ընդարձակ ուսումնասիրությամբ և ծանոթագրություններով (տե՛ս  
Acta Sanctorum, Septembris 30. Tomus VIII. Antverpiae, 1762, pp. 295—319, 320—413),  
իսկ քննական հրատարակությունն իրականացրել է Պաուլ դը Լագարդը (տե՛ս  
Göttingische Gelehrte Anzeiger, XXXV, 1887):

<sup>5</sup> Հմմտ. Ագաթանգեղոս, Պատմություն հայոց, աշխարհաբար թարգմանություն Աերա-  
ծականով ու ծանոթություններով Ա. Տեր-Ղևոնդյանի, Եր., 1977, էջ 157—163:

մտքի աշխատանքի և վաճառականության համեմատություն-զուգահեռը կարելի է բացատրել հայ հեթանոսական հավատքի անուղղակի դրսևորմամբ:

Հայոց դիցարանում կար մի աստվածություն՝ Տիրր, որի մասին մատենագրական միակ, քիչ թե շատ հանգամանալից հիշատակության հանդիպում ենք իր իսկ Ազաթանգեղոսի գրքում: Ըստ պատմիչի քրիստոնեական դարձ կատարած հայոց թագավոր Տրդատի առաջին քայլը նոր կրոնի հաստատման ճանապարհին լինում է այն, որ նա Գրիգոր Պարթևի հետ միասին իր զորքով ավերում-կործանում է Տիրի պաշտամունքի տեղին. «Նախ դիպեալ ի ճանապարհի երազացոյց երազահան պաշտաման Տրի դից, դպրի գիտութեան քրոմաց, անուանեալ Դիւան գրչի Որմզդի, ուսման ճարտարութեան մեհեան. նախ ի նա ձեռն արկեալ՝ քակեալ այրեալ աւերեալ քանդեցին» (§ 778. «Նախ ճանապարհին հանդիպեցին քրմական գիտության դպիր, Որմզդի գրչի Դիվան կոչված, երազացոյց, երազահան պաշտամունքի Տիր աստծու իմաստության ուսման մեհյանը և ամենից առաջ սկսեցին այն քանդել, այրել, ավերել»): Պատմիչի հաղորդման համաձայն մեհյանը գտնվել է Արտաշատ քաղաքի պարիսպների դարպասից դուրս, ճանապարհի վրա, Երազամույն կոչված վայրում, ինչպես ուսումնասիրողներն են նկատել, քաղաքի արևմտյան կողմում<sup>6</sup>:

Հայ հեթանոսական դիցարանի համեմատական քննությամբ զբաղվել են այնպիսի գիտնականներ, ինչպիսիք են Մ. էմինը, Ղ. Ալիշանը, Բ. Սարգիսյանը, Ծ. Դուրյանը և ուրիշներ, օտարներից՝ Պ. դը Լազարդը, Հ. Գեյցերը, Ա. Կարիերը, Հ. Հյուբշմանը և ուրիշներ<sup>7</sup>: Նրանք մատենագրական, ազգագրական և պատմահնագիտական տվյալների հիման վրա եկել են այն եզրակացության, որ Տիրը, իբրև աստվածություն, համապատասխանել է հունական Հերմեսին և հռոմեական Մերկուրիոսին, հետևաբար հին հայոց կողմից պաշտվել է որպես դպրության, գիտության, պերճախոսության հովանավոր: Ինչպես Ալիշանն է գրում Ազաթանգեղոսի հետևության, Տիրը «գիտությանց խնամակալ էր և Արամազդա դպիր, որպես Հերմեսն՝ հունաց և Մերկուրոս՝ լատինաց պատգամավոր և դպիր էին Դիոսի»<sup>8</sup>:

Որ Ալիշանը և նրան համակարծիք հայագետները այդ համեմատությունն ունենացումով արդարացի էին, դա հաստատվում է նաև Աստվածաշնչի հայկական ձեռագրերով: «Գործք առաքելոց»-ի 14-րդ գլխի 11-րդ բանի՝ «Եւ կոչէին զԲառնարաս Դիոս, և զՊաւղոս՝ Հերմես, քանզի նա էր առաջնորդ բանին», դիմաց, լուսանցքում, Դիոս անվան համար որոշ ընդօրինակություններում գրիչները թողել են այսպիսի նշում՝ «Որմիզդ», իսկ Հերմեսի համար՝ «Տիր դից դպիր»<sup>9</sup>: Զեռագրական այս նշումը վկայում է, որ հայկական միջնադարում ընդունված է եղել Տիրի և Հերմեսի նույնացումը:

Տիրի պաշտամունքը ըստ երևույթին հին հայոց կյանքում տարածման բավական լայն շառավիղ է ունեցել և արտահայտվել է մշակութային տար-

<sup>6</sup> Տե՛ս Ն. Տաղավարյան, Հայոց հին կրոնները, Կ. Պոլիս, 1909, էջ 74:

<sup>7</sup> Հայ հեթանոսական աստվածությունների և պաշտամունքի ուսումնասիրությանը նըվիրված աշխատություններից առավել արժեքավոր են հետևյալ հետազոտությունները՝ Մ. Էմին, Հետազոտությունք ի վերա հայկական հեթանոսության, Արմաշ, 1875 (արևմտահայերեն թարգմանությունը ֆրանսերենից՝ Հ. Տերոյեցի). Ղ. Ալիշան, Հին հավատք կամ հեթանոսական կրոնք հայոց, Վենետիկ, 1895. Հ. Գեյզեր, Հետազոտություն հայ դիցաբանության, Վենետիկ, 1897. Ա. Կարիեր, Հեթանոս Հայաստանի ութ մեհյաններն, Վիեննա, 1899. Ծ. Դուրյան, Հայոց հին կրոնը կամ հայկական դիցաբանություն (տե՛ս «Ամբողջ երկեր Եղիշե պատրիարք Դուրյանի», Երուսաղեմ, 1933) և այլն:

<sup>8</sup> Ղ. Ալիշան, Հին հավատք կամ հեթանոսական կրոնք հայոց, էջ 289:

<sup>9</sup> Տե՛ս «Աստուածաշունչ մատենան Հին և Նոր կտակարանաց», Վենետիկ, 1805, էջ 787, տողատակ: Հմմտ Ղ. Ալիշան, Հին հավատք կամ հեթանոսական կրոնք հայոց, էջ 289:

բեր բնագավառներում: Գերմանացի գիտնական Ն. Գելցերը հիմք ունի եկ-  
թադրելու, որ քրիստոնեության հաստատումից անմիջապես առաջ Հայաստա-  
նում Տիրի հովանավորութեամբ գոյություն է ունեցել իմաստասիրական դրպ-  
րոց, և Ագաթանգեղոսը պետք է որ լինի այդ դպրոցի «խորհրդոց հմուտ անձ  
մի»<sup>10</sup>: Տիրի անունով է կոչվել յոթ մուրակներից մեկը՝ Փայլածուն (Մերկու-  
րիոսը): Միաժամի օգերևույթը անվանվել է նաև Տիրական գոտի (այլ կերպ՝  
Միրանի գոտի): Բուն հայկական ամսանուններից շորորդը նույնպես Տիրի  
հետ է կապվում և կոչվում է Տրէ (Տրի—սեռ. Տրեայ, որից և Տրէ): Տիրը հնում  
բոլոր ամիսների 13-րդ օրվա պաշտպան—հովանավորն է համարվել, և  
ամսվա այդ օրը Տիրական է անվանվել, այսինքն՝ Տիրի օր: Տրդատ անձնա-  
նունը ստուգաբանորեն բացատրվում է Տիրի—դատ բաղադրիչներով, այսինքն՝  
Տիրի տուրք, Տիրի տված: Տիր արմատը հանդիպում է նաև Տիրինկատար (լե-  
ռան անուն), Տիրան, Տիրոց, Տիրիթ և այլ անուններում<sup>11</sup>: Պահպանվել է ան-  
վանի ազգագրագետ Ծ. Լալայանի կողմից գրառված մի գրույց՝ կապված Մշո  
կողմերի հետ: Մուշ քաղաքից հարավ կա մի լեռ՝ Տիրակատար կամ Տիրկա-  
տար անունով, որի լանջին գտնվել է նրա մեհյանը: Ըստ տեղացիների պատ-  
մածի Տիրը հանգստացել է լեռնալանջին եղած քարերի վրա և կերել հատկա-  
պես իր համար՝ մեղունների պատրաստած մեղրը, որը պահվել է մոտիկ քա-  
րայրի 10 կարասների մեջ: Քարերը դրա համար էլ կոչվել են Մեղրի քարեր<sup>12</sup>:

Մկրտիչ էմիրը Տիրին Հերմեսի հետ համեմատում է նաև այն դերով, որ  
նա «Հերմեսին պես հոգիները դժոխք կտանի», և սրամտորեն նկատում, որ հայ  
ժողովրդական «Գրողը տանի» անեծքը կապվում է Տիրի անվանը: «Գրող բա-  
ռը,— պարզաբանում է իր միտքը էմիրը,— գրեմ բային ներկա բայանունն է  
և Ագաթանգեղոսի մեջ գործածված գրիչ բառին հետ նույնն է. ուրեմն ասիկա  
նախնի հայոց Տիր շաստվածույն տված մեկ ածականն է, զոր հոգիները դը-  
ժոխք տանող կհամարեին... Գոնե ես այսպես կբացատրեմ այս առակավոր  
գրուցվածքը, զոր հայք ի գործ կածեն առանց հասկնալու և առանց մտքերենն  
անգամ անցնելու, որ այսպես ըսելով՝ իրենց կռապաշտ նախնյաց լեզուն և  
միտքը գործածած կըլլան»<sup>13</sup>:

Տիրի անունը պահպանվել է և «Տի՛ր, օ՛ն անդր» մերժումի բանաձևի մեջ,  
որ եղել է երդմանաձև և նշանակել «Աստված շանի»<sup>14</sup>, իսկ ըստ Կ. Գաբրիլյանի  
Սեբաստիայում գործածվելիս է եղել «Տրին (կամ՝ Տիրին) տարին» արտա-  
հայտությունը՝ «Աստծու տարին» առումով<sup>15</sup>: Եղիշե Դուրյանը, անշուշտ, չի  
սխալվում՝ Տերընտաս եկեղեցա-ժողովրդական ծեսի անվան ծագումը առնչե-  
լով Տիրի անվանը: Տերընտասը՝ հեթանոսական ամանորյա հրավառության  
այդ տոնը (պարսկերեն հնչմամբ՝ տիրենտազ, որ նշանակում է նետածիգ),

<sup>10</sup> Տե՛ս Ն. Գելցեր, Հետազոտություն հայ դիցաբանության, էջ 41: Գելցերը քանի որ  
հակված է եղել անցյալներում տարածված այն տեսակետին, թե Ագաթանգեղոսն իսկապես  
Տրդատին և սուրբ Գրիգորին ժամանակակից անձնավորություն է, Ռետևայես Ռուսարեն  
պետք է գրած լինի իր պատմությունը, ընկնելով ծայրահեղության մեջ՝ կարծում է, որ Ագա-  
թանգեղոսը մինչև քրիստոնեություն ընդունելը եղել է «թերևս նույն ժամանակի քուրմ մի»  
(նույն տեղում):

<sup>11</sup> Ալիշանը սխալմամբ Տիրատուր անվան ծագումը ևս կապում է Տիրի հետ («Հին  
հավատք կամ հեթանոսական կրոնք հայոց», էջ 288):

<sup>12</sup> Տե՛ս Ա. Ղանալանյան, Ավանդապատում, Եր., 1900, էջ 74:

<sup>13</sup> Մ. Էմին, Հետազոտությունք ի վերա հայկական հեթանոսության, էջ 22—23:

<sup>14</sup> Տե՛ս Ծ. Դուրյան, Հայոց հին կրոնը կամ հայկական դիցաբանություն, էջ 45. նաև՝  
Ն. Հակոբյան, Հայկական ամիսները («Բանասեր», հո. 2-րդ, պրակ Ա, Փարիզ, 1900, էջ  
98):

<sup>15</sup> Կ. Գաբրիլյան, Բառգիրք սեբաստաբայ գավառայեզի, Երուսաղեմ, 1952, էջ 524  
(տե՛ս «Տարի» քառաճյուղը):

եկել միացել է քրիստոնեական Տյառնընդառաջի արարողությանը՝ վերջինիս մեջ կենսունակ պահելով իր ծիսական հատկանիշները. կրակ վառելը և նրանից կրակ վերցնելն ու տուն տանելը խորհրդանշել են նոր տարվա սկիզբը<sup>16</sup>։ Ալիշանը և մյուս հետազոտողները նաև կարծում են, որ Տիր հայկական աստվածությունը ծագում է պարսկականից։

Այն հանգամանքը, որ հունական Հերմեսը (ինչպես և հռոմեական Մերկուրիոսը) հատկապես եղել է օլիմպիական աստվածների բանբերը (լրաբերը), ճանապարհորդների և հովիվների հովանավորը, առևտրի և շահույթի աստվածը, իսկ Տիրի անունն առնչվում է դպրության ու գիտության հետ, — Ալիշանը և ուրիշներ, հիմնվելով խորենացու վրա, ցույց են տվել, որ Տիրի մեջ մարմնավորվել է նաև գիտության և արվեստի հովանավորի ֆունկցիան, և հին Հայաստանում նա նույնացված պիտի լինի Ապոլլոնի հետ։

Պատահական չպետք է համարել այն, որ Ագաթանգեղոսի պատմության հունարեն վաղմիջնադարյան թարգմանության հեղինակը, ակնհայտորեն շփոթելով և § 778-ի «Տրի դից» բառերը իրրև մեկ անուն ընկալելով՝ Τριδης ձևով, այնուհետև միևնույն կապակցության մեջ անհրաժեշտ է գտել հիշատակելու նաև Ապոլլոնին՝ դրանով իսկ հաստատելով, որ Տիրը և Ապոլլոնը հայկական իրականության մեջ ընկալելի են եղել որպես միմյանց համապատասխանող աստվածություններ. «Τριδης ε'κε'κλητο βωμὸς Ἀπολλωνος» («Տրի դիցը կոչվում էր Ապոլլոնի մեհյան») <sup>17</sup>։

Խորենացին, Արտաշես Մեծի մասին պատմելով, գրում է, որ ասիական արշավանքից վերադառնալիս արքան իր հետ բերեց նաև Ապոլլոնի պղնձաձուլլ ոսկեզօծ արձանը, որը հետագայում Սանատրուկի որդի Արտաշեսը կանգնեցնում է Արտաշատ քաղաքի մոտ, ճանապարհի վրա<sup>18</sup>, այսինքն՝ այնտեղ, ուր Ագաթանգեղոսը մատնացուց է անում Տիրի արձանը։

Որ խորենացին Տիրի անունը չի հիշատակում, դա պատահական չէ. հայ հեթանոսական աստվածությունները նրա պատմության մեջ հիմնականում ներկայացվում են այն վերանվանում-զուգահեռներով, որոնք ընդունվեցին Հայաստանում հելլենիզմի դարաշրջանում։ Մշակույթի հելլենացմանը մեծապես նպաստեցին հայոց արքաներ Արտաշես Ա-ն և նրա որդի Տիգրանը, ինչպես նաև Երվանդն ու Արտաշես Բ-ն<sup>19</sup>։ Դա մեծ փոփոխությունների մի շրջան էր։ Ըստ հունականի վերաիմաստավորվեց ու նորովի ձևավորվեց հեթանոսական Հայաստանի պանթեոնը. Անահիտը նույնացվեց Արտեմիսի, Նանեն՝ Աթենասի, Միհրը՝ Հեփեստոսի, Վահագնը՝ դյուցազն Հերակլեսի, Աստղիկը՝ Աֆրոդիտեի և Տիրը՝ Հերմեսի ու Ապոլլոնի հետ։ Ահա թե ինչու խորենացին, որ իր ճաշակով ու մշակութային կողմնորոշմամբ հակված էր դեպի Հունաստանը և հայկական հելլենիզմի ամենապերճախոս աղբյուրն է, այդ աստվածությունների տեղական հայկական անվանումները մեծ մասամբ չի տալիս, ներկայացնում է նրանց հունական փոխառյալ զուգահեռները, ընդ որում շունի նաև Տիր անունը, նրա փոխարեն հիշատակում է Ապոլլոնին։

Ինչպես տեսանք, Ագաթանգեղոսը ցանկալի համակողմանիություններ պատկերացում չի տալիս Տիր աստվածության էություն մասին, չի նշում նաև, որ նա վաճառականության հովանավոր համարված լինի։ Սակայն Հերմես-

<sup>16</sup> Հմմտ. Ե. Գուրջան, Հայոց հին կրոնը կամ հայկական դիցաբանություն, էջ 18։

<sup>17</sup> Հունական թարգմանության այս հատվածին առաջին անգամ ուշադրություն է դարձրել Հ. Գեյզերը. տե՛ս «Հետազոտություն հայ դիցաբանության», էջ 39։

<sup>18</sup> «Մովսիսի Խորենացույ Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ Մ. Արեղեան և Ս. Թարթիսեան», Տիֆլիս, 1918, էջ 177։

<sup>19</sup> Տե՛ս Աույն տեղում, գիրք երկրորդ, գլ. 12, 14, 39, 40 և 49։

Ապուլլոն-Մերկուրիոս համապատասխանությունը նրա հետ հիմք է տալիս ենթադրելու, որ Տիրը, իբրև նրանց հայկական զուգահեռ, մեզանում նաև առևտրի ու վաճառականության պաշտպանն է եղել:

Հին Հայաստանում Տիր հեթանոսական աստվածության նախնական պատկերացման վերաբերյալ մեր շարադրանքն ամբողջությամբ բխում է հայոց նախաքրիստոնեական հավատքի հետազոտությանը նվիրված հայագիտական հարուստ գրականությունից, ի մի է բերում հնախոսական տվյալներն ու դրանցից արված եզրակացություններն այն սկեռուն միտումով, որ դպրության ու վաճառականության հովանավոր աստծու ազդեցությունը, որպես վերապրուկ, հարատևել է նաև վաղքրիստոնեական Հայաստանում: Գրողի ըստեղծագործական աշխատանքը իբրև «խոսքի վաճառականություն» ըմբռնելու ազաթանգեղյան փոխաբերությունը պատահական համեմատություն չի կարելի համարել, այն ունի խոր արմատներ. կարծում ենք՝ բխում է Տիրի դերի ու հատկանիշների հետ կապված հին պատկերացումից՝ առանց հեթանոսականի ուղղակի մատնանշման:

Վերջում անհրաժեշտ ենք գտնում ավելացնել, որ մեր նկատումը, այնուամենայնիվ, ունի ընդամենը վարկածի արժեք, կարոտ է լրացուցիչ տրվյալների և ավելի հանգամանալից հիմնավորման:

**П. М. ХАЧАТРЯН**—Загадка в предисловии «Истории Агатангелоса.— Агатангелос принадлежит к тому времени, когда осколки побежденного и уничтоженного язычества в Армении продолжали бытовать в системе нового мировоззрения и культуры, переосмысляясь в общей национальной атмосфере христианства. В статье, отталкиваясь от этой отправной точки, делается попытка объяснить выражение «торжище слова» из предисловия «Истории Армении» Агатангелоса и образное сравнение творческого труда писателя с торговлей, купечеством. Выдвигается версия, что такое представление связывалось с функциями бога Тира, который был параллелью греческих Гермеса и Аполлона, а также римского Меркурия, а следовательно, покровителем книжности, знаний и красноречия, одновременно торговли и купечества.